պանքն ենք բերում հայրենի իշխանություններին, հանձին Սերժ Սարգսյանի՝ Մատենադարանի հանդեպ դրսեւորվող հոգածության համար: Մեր գնահատանքն ենք բերում Մատենադարանի նոր շենքի բարերարությունն ստանձնած տիար Սերգեյ Համբարձումյանին, Մատենադարանի տնօրենությանը եւ գիտաշխատողներին, Մատենադարանի բոլոր բարերարներին, նորակառույցը նախագծող ճարտարապետին, կառուցող շինարարներին»:

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆ-ԻՐԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԽՄԲԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ

Մայիսի 14-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստան-Իրան բարեկամության պատգամավորական խմբի ներկայացուցիչներին:

Հանդիպման ընթացքում անդրադարձ կատարվեց պատգամավորական խմբի հերթական այցի մանրամասներին, քննարկումներին եւ արձանագրված արդյունքներին: Կարեւորվեց ձեւավորված համագործակցությունը, որի բարի պտուղները պիտի ծառայեն երկու ժողովուրդների առավել բարեկեցիկ եւ առաջընթաց կյանքին:

Վեհափառ Հայրապետն ի դեմս պատգամավորների եւ դեսպանի իր գնահատանքը հայտնեց Իրանի Իսլամական Հանրապետության իշխանություններին՝ Իրանում բնակվող հայորդիների հանդեպ հոգատար վերաբերմունքի եւ հայ հոգեւոր, ազգային մշակույթի ու դրա պահպանման հանդեպ ցուցաբերվող ուշադրության համար:

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՉԵԽԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻՆ

Մայիսի 16-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Չեխիայի Հանրապետության գլխավոր դատախազ տիկին Ռենատա Վեսեցկայի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ տիար Աղվան Հովսեփյանի:

Ողջունելով մեծարգո հյուրին՝ Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց երկու երկրների միջեւ բազմակողմանի շփումների եւ սերտ համագործակցության առիթով եւ հաջողություն մաղթեց երկու դատախազներին: Ի դեմս Չեխիայի գլխավոր դատախազի՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհակալություն հայտնեց Չեխիայի իշխանություններին՝ հայ համայնքի եւ Հայ Եկեղեցու հանդեպ դրսեւորվող ուշադրության եւ հոգատարության համար:

Հանդիպմանը խոսվեց նաեւ երկու երկրներում Եկեղեցի-պետություն հարաբերությունների եւ եկեղեցական կյանքի մասին: Այս առնչությամբ Վեհափառ Հայրապետն անդրադարձավ Հայ Եկեղեցու կարեւոր դերակատարությանը հայ ժողովրդի կյանքում: